ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 3

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար գրասենյակային նյութեր և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/06» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Գավառ 13 ապրիլի 2022թ.

Սույն թվականի ապրիլի 13-ին ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար գրասենյակային նյութեր և գրենական պիտույքներ ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/06» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի արդյունքների ամփոփման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ժ. Խ. Սաֆարյանը, հանձնաժողովի անդամներ՝ Ս. Պ. Կարապետյանը և Ս. Ռ. Գասպարյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց, որ ընտրված մասնակիցներ ճանաչված «Սմարթլայն» ՍՊԸ-ի և «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրերի նախագծերի հաստատումները և որակավորումների ու պայամանագրերի ապահովումները ներկայացնելու մասին:

Հանձնաժողովը գնահատման թերթիկների հիման վրա գնահատեց, որ պայմանագրերի նախագծերի հաստատումները, որակավորումների ու պայամանագրերի ապահովումները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգով և ժամկետներում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

a) 1; 2; 3; 4; 5; 6; 9; 10; 11; 13; 15; 17; 22; 24; 25; 26; 30 և 33 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ու «Սմարթլայն» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի ապրիլի 13-ին կնքել գրասենյակային նյութերի և գրենական պիտույքների մատակարման «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/06(1)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գումարը կազմում է 230.600 (երկու հարյուր երեսուն հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
b) 7; 8; 12; 14; 18; 19; 20 և 21 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ին և «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ու «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի ապրիլի 13-ին կնքել գրասենյակային նյութերի և գրենական

պիտույքների մատակարման «ԳՊՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-22/06(2)» ծածկագրով գնման պայմանագիր, որի ընդհանուր գումարը կազմում է 82.261,2 (ութսուներկու հազար երկու հարյուր վաթսունմեկ ամբողջ քսան) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվել է կողմ՝ 3 և դեմ՝ 0:

հանձնաժողովի նախագահ Խ. Ժ. Սաֆարյան

հանձնաժողովի անդամ՝ Ս. Ռ. Գասպարյան

հանձնաժողովի անդամ՝ Ս. Պ. Կարապետյան

հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան